



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ»



Ա. ՄԻՆԱՅԱՆ

«02» 06 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 52

**Ձեռնարկողը՝**

**<<ԳՆՔ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ**

<< Սյունիքի մարզ, ք. Մխիթան Սպանդարյան 4

**Գործունեությունը՝**

**<<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի վերակառուցման**

**աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի**

**վրա ազդեցության գնահատման հայտ**

<< Սյունիքի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝**



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 52

<02> 06 2017թ.

**<<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի վերակառուցման աշխատանքային նախագծի  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ**


Ձեռնարկող՝	<<ԳՆՔ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	<< Սյունիքի մարզ, Գորայք համայնք

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի վերակառուցման նախագծի շրջանակներում նախատեսվում է վերանայել նախկին նախագիծը՝ իրականացվելով շահագործվող ՓՀԷԿ-ի ջրաէներգետիկ ցուցանիշների և ՓՀԷԿ-ի որոշ կառուցվածքների փոփոխություն:

Ներկայումս շահագործվող <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ը Որոտանի գետահատվածում առաջացող էներգետիկ անկումն օգտագործելու նպատակով, գետի մնացորդային 4.8 խմ/վրկ ջրաքանակը՝ 731մ երկարությամբ դերիվացիոն ջրանցքով տեղափոխվում է ճնշումային ավազան /որի նիշը կազմում է 2121.0 մ/, որտեղից սկիզբ առնող 162.0մ երկարությամբ, 1420մմ տրամագծով պողպատե ճնշումային խողովակաշարի միջոցով տեղափոխվում է Որոտան գետի աջ ափում տեղակայված ՓՀԷԿ-ի շենք: <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի շենքում տեղադրված 3 խումբ հիդրոագրեգատների միջոցով ՀԷԿ-ի շենքում ապահովվում է 748 ԿՎտ դրվածքային հզորություն: ՀԷԿ-ի շենքը գտնվում Որոտան գետի աջ ափին՝ ջրահեռացման 2096.0 մ նիշում: Պատվարի ծախ մասում կառուցված ձկնուղու /որն իրենից ներկայացնում է բազմաստիճան կասկադ/ միջոցով ապահովվում է բնապահպանական ելքի բաց թողնումը և Որոտան գետում հանդիպող ձկնատեսակների անարգել տեղաշարժը վերին-ստորին բիեֆներ: ՀԷԿ-ի աշխատանքը չի խոչընդոտում այլ նպատակներով ջրասպառման և ջրօգտագործողների ռեժիմները:

Հիդրոէլեկտրակայանի բարձր տնտեսական շահավետություն ապահովելու համար ինչպես նաև ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործման նպատակով <<ԳՆՔ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերության նախաձեռնությամբ օգտագործվող գետահատվածի հաշվարկային հոսքերի համար կատարվել են տեխնիկատնտեսական հիմնավորումներ և հաշվարկներ, << բնապահպանության նախարարությունից ստացվել է ջրօգտագործման թույլտվություն /թիվ 000244 տրվ. 27.12.2016թ./, որոնք հիմք են հանդիսացել նախագծի իրականացման համար: <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի համար առավելագույն հաշվարկային

Նկարչու ՏԻԿ օրբակյան





ջրաքանակը սահմանվել է՝ 7.0 խմ/վրկ, Որոտան գետի օգտագործվող գետահատվածի համար էկոլոգիական թողըը գնահատվել է 1250.0լ/վ, ինչը սահմանվել է նաև ընկերությանը տրված ջրօգտագործման թույլտվությամբ /թիվ 000244 տրվ. 27.12.2017թ./: Նշված հաշվարկային ելքը ՓՀԷԿ-ի կողմից կարող է օգտագործվել վերակառուցման և վերազինան աշխատանքների իրականացման միջոցով:

<<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի փոփոխված նախագծով առաջարկվող վերակառուցման աշխատանքները ներառում են.

- Ճնշումային ավազանից սկիզբ առնող ևս մեկ՝  $l=162$ մ,  $d=1420 \times 10$ մմ տրամաչափի պողպատե ճնշումային խողովակաշարի կառուցում՝ պահանջվող 7.0 խմ/վրկ հաշվարկային ելքը տեղափոխելու համար

- ՓՀԷԿ-ի շենքի վերակառուցման աշխատանքներ՝ պայմանավորված շենքում լրացուցիչ ևս 3 հիդրոագրեգատների տեղադրումով /ներքին հարդարում, չափերի փոփոխություն և այլն/

- Կայանային հանգույցի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

ՀԷԿ-ի շենքում գործող և տեղակայվելիք հիդրոագրեգատներն ունեն ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ:

Ելնելով արոտավայրերի տարածքներում անասունների և մարդկանց անվտանգության ապահովման պայմաններից <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի վերակառուցման աշխատանքներում նախատեսվում են նաև դերիվացիոն ջրանցքի /որտեղով ՓՀԷԿ-ի համար տեղափոխվում է Որոտան գետի մնացորդային ելքերը/ առավել վտանգավոր հատվածների ցանկապատման, բետոնային սալերով փակման աշխատանքներ:

ՀԷԿ-ի շենքի վերակառուցման աշխատանքների ավարտից հետո, կայանային հանգույցի այն հատվածները, որտեղ բացակայում է կանաչ գոտին, նախատեսվում է իրականացնել նաև կանաչապատման աշխատանքներ:

Նախագծի արդիականացման և ՓՀԷԿ-ի վերակառուցման արդյունքում ՀԷԿ-ի շենքում տեղադրված ընդհանուր 6 հիդրոագրեգատների աշխատանքը կապահովեն հետևյալ ցուցանիշները.

Հաշվարկային մակարդակը վերին բիեֆում – ՆԴՄ - 2121.0մ

Հաշվարկային մակարդակը ՓՀԷԿ-ի ստորին բիեֆում

- 2096.0 մ

Ստատիկ ճնշումը՝

- 24.9 մ

Հաշվարկային ելքը՝

- 7.0 մ<sup>3</sup>/վ

Հաշվարկային նետոն ճնշումը՝

24.8 մ

Հաշվարկային հզորությունը

- 1.32 ՄՎտ

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը

- 3.58 մլն.կՎտժ

Հիդրոագրեգատների քանակը

- 6 հատ

Նախատեսվող աշխատանքների իրականացման համար նոր հողատարածքների օգտագործման անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ գործունեության ենթակա տարածքը պատկանում է <<ՀԳՆՔ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերությանը: Կառուցվող խողովակաշարը տեղադրվելու է գոյություն ունեցող ճանապարհի եզրով, նույն խրամուղում, որտեղ անցկացվել է նախկին նախագծով նախատեսված  $l=162$ մ,  $d=1420 \times 10$ մմ տրամաչափի պողպատե ճնշումային խողովակաշարը: Խողովակի անցկացման համար փորված խրամուղին շինարարության ավարտից հետո պետք է ծածկվի գրունտով և բնահողով՝ պահպանելով շրջակա միջավայրի բնական վիճակը: Խողովակաշարի անցկացման ուղեգծում ծառափուտային բուսականությունը բացակայում է:





Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կարտահայտվի շինարարության փուլում հողային աշխատանքների իրականացմամբ, որը կուղեկցվի հողային ռեսուրսների վրա ազդեցություններով, փոքր քանակներով ծխագազերի և փոշու ժամանակավոր արտանետումներով և լանդշաֆտի ժամանակավոր խախտմամբ:

Նախագծում հողային աշխատանքներից /որն ընդգրկում է միայն կառուցվող խողովակաշարի հատվածը/ առաջացող հողաբուսաշերտի ծավալը գնահատվել է 162.0 մ<sup>3</sup>: Այն 100մ հեռավորության վրա ժամանակավոր կուտակվելու է, աշխատանքների ավարտից հետո տարածքների վերականգնման նպատակով օգտագործելու համար: Խողովակաշարի խրամուղու տեղադրման աշխատանքներից առաջացած ավելցուկային գրունտները՝ գումարային՝ 353մ<sup>3</sup> ծավալով կօգտագործվեն տեղում, կամ մերձակա տարածքների հարթեցման համար:

ՀԷԿ-ի շենքում վերակառուցման աշխատանքների ավարտից հետո, կայանային հանգույցի այն հատվածներում, որտեղ բացակայում է կանաչ գոտին, նախատեսված են կանաչապատման աշխատանքներ:

Շահագործման փուլում, ջրային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում է հանդիսանում ջրառի գետահատածքից ցած՝ Որոտան գետի հունում բնապահպանական թողքի ընդունված մեծության ապահովումը, որն աշխատանքային նախագծում գնահատված է 1250.0լ/վրկ:

«Որոտան-7» ՓՀԷԿ-ի վերակառուցման նախագծի իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցությունների նվազեցման և փոխհատուցման նպատակով մշակվել են բնապահպանական և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների ծրագիր, որոնք ուղղված են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներին /հող, օդ, ջուր, կենսաբազմազանություն/: Միջոցառումների արդյունավետ իրականացման, վերահսկման ինչպես նաև անվտանգության ապահովման նպատակով գործունեության ազդեցության ենթակա տարածքների համար նախագծում նախատեսվել է բնապահպանական մոնիթորինգի պլան:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում Գորայք համայնքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 26.03.2017թ անցկացված հանրային քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվեցին մտահոգություններ և առաջարկություններ՝ ջրընդունիչ հանգույցի տարածքի ցանկապատման աշխատանքների, Որոտան գետում առկա ձկնատեսակների պահպանման և բնապահպանական ելքի ընդունված չափաքանակի ապահովման հետ կապված: Առաջարկները հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում և նախագծում արվել են համապատասխան փոփոխություններ:

Այսպիսով, ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ նախագիծը մշակվել է ՀԷԿ-երին ներկայացվող շինարարական նորմերին և բնապահպանական օրենսդրական պահանջներին համապատասխան: ՓՀԷԿ-ի նախագծով առաջարկվող լուծումները, նախագծային փոփոխությունները և տեխնիկատնտեսական հիմնավորումները չեն առաջացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն Որոտան գետի էկոհամակարգի և շրջակա տարածքների վրա: Նախագծային լուծումների ճիշտ իրականացման և ներդրված գումարների նպատակային օգտագործման արդյունքում բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա և



ազդեցության ենթակա Գորայք համայնքի բնակչության վրա հնարավորինս կնվազեցվի:

### Փորձաքննական պահանջներ

1. Շահագործման փուլում, գետային էկոհամակարգի և ձկնատեսակների պահպանման, կայուն ջրօգտագործման, ինչպես նաև շրջակա տարածքներում անվտանգության ապահովման նպատակով, անհրաժեշտ է՝ Որոտանի գետահատվածում <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի համար կառուցված ջրընդունիչ հանգույցն ապահովել՝

- բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգով՝ սահմանված 1250 լ/վրկ բնապահպանական ելքի չափաքանակի պահպանման համար

- ձկնապաշտպան կառուցվածքներով /ձկների մուտքը խողովակաշար արգելելու նպատակով՝ դերիվացիոն ջրանցքի մուտքամասն ապահովել ձկնապաշտպան ցանցով/

- դերիվացիոն ջրանցքի առավել վտանգավոր հատվածների ցանկապատման և բետոնյա սալերով փակման աշխատանքներով՝ մարդկանց և անասունների անվտանգության ապահովման համար

2. Տրանսֆորմատորային յուղով շրջակա տարածքներն աղտոտումից կանխելու նպատակով, անհրաժեշտ է տրանսֆորմատորները կահավորել յուղահավաք համակարգով, իսկ բանեցված յուղերը հեռացնել սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԳՆՔ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Որոտան-7>> ՓՀԷԿ-ի վերակառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



*[Handwritten signature]*

Հ. Մկրտչյան